**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱԾՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 24-ը մայիս 2017թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք- վացքատնային սպասարկման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Սարկիսյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր- կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան

**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևավորման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ. Բաղդասարյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.« ***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱԾՁԲ-7/1*** » ծածկագրով բաց ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱԾՁԲ-7/1*** » ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ. Բաղդասարյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար « դաշտային շարժական բաղնիքի կառուցման աշխատանքներ » ձեռքբերման նպատակով կազմակերպված « ***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱԾՁԲ-7/1*** » ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| *1* | <Էլիտ Հիլզ> ՍՊԸ |
| *2* | <Սալյացք> ՓԲԸ |
| *3* | <Սասունասար> ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2 .« *ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱԾՁԲ-7/1* » ծածկագրով բաց ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Տ. Բաղդասարյան)

2.1 Թվով 2 մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի: Մերժվել է <Սալյացք> ՓԲԸ-ի հայտը քանի որ էլեկտրոնային հայտում կցված չէ եղել գնային առաջարկը, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է վերոնշյալ հայտը:

Ի գիտություն տեղեկացվում է, որ 29.05.2017թ <Սալյացք> ՓԲԸ-ն բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ և համաձայն < Գնումների մասին> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ: 03.07.2017թ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը հրապարակեց որոշումը, մասնավորապես որոշեց մերժել <Սալյացք> ՓԲԸ-ի կողմից 29.05.2017թ. ներկայացված բողոքը:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: Սակայն առկա են անհամապատասխանություններ մասնավորապես՝

**«Սասունասար» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 2-ը բացակայում է, ինչպես նաև ներկայացվել է Հավելված 3.3.1 սակայն Ձեր կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը: Անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով (վերը նշված որոշման 46-րդ կետ) մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում անահամապատասխանության վերաբերյալ շտկումներ ներկայացրել է «Սասունասար» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովը նշված հայտը գնահատել է բավարար:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-7/1*** » ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Տ. Բաղդասարյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվային Գումար | Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Անվանումը | գինը | | Անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Բաղնիքների կառուցման աշխատանքներ /Դաշտային շարժական բաղնիք | հատ | 10 | 27000000 | <Էլիտ Հիլզ> ՍՊԸ | 19774000 | 23728800 | <Սասունասար> ՍՊԸ | 21150000 | 25380000 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « *ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-7/1*» ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Տ. Բաղդասարյան)

4.1 «***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-7/1***» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ <Էլիտ Հիլզ> ՍՊԸ-ին « ***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-7/1*** » ծածկագրով ընթացակարգի 1-ին, չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

4.2 12.07.17թ.Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-7/1***» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 12.07.17թ.Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Տ. Բաղդասարյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Տ. Բաղդասարյան)

***« ՀՀ ՊՆ ՆՏԱՎ-ԲԸԱԾՁԲ-7/1»*** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:*

**Գնահատող** Վ. Գասպարյան

**Գնահատող** Ա. Սարկիսյան

**Գնահատող** Գ. Ռիստյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնահատող** Ա. Հակոբյան

**Գնումների համակարգող՝** Տ. Բաղդասարյան